

5920



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



«13» 08 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 162 - 24

Նախաձեռնող՝

«Նուովո վելոդրոմ» ՍՊԸ  
ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 10

Գործունեությունը՝

Գ.Լուսավորիչի փ. 4 հողամաս հասցեում  
բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում  
ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 162 - 24

«13» օգոստոսի 2024թ.

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Գ. Լուսավորչի փողոց 4 հողամաս հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր

Նախաձեռնող՝	«ՆՈՒՈՎՈ ՎԵԼՈԴՐՈՄՈ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/ նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան

**Ներածական մաս.** Փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ և նախագծով նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Կենտրոն վարչական շրջանի Գ. Լուսավորչի փողոց 4 հողամաս հասցեում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել՝

- բնակելի համալիրի նախագծային փաստաթղթերը
- նախագծի կազմման համար համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,
- սեփականության վկայականը՝ N 20072022-01-0278, համաձայն որի հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, իրավունքի տեսակը սեփականություն:
- ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N 01/18-07/2-Դ-118990-718 տրված՝ 05.10.2023թ.:

**Նկարագրական մաս.** Հողամասի մակերեսը 1.09333 հա է, այն կառուցապատումից ազատ տարածք՝ շրջապատված բազմագործառույթ շենք-շինություններով:

Ֆիզիկատերերաբանական վտանգավոր երևույթներն, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասաբան ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են: Տվյալ





տեղամասերում տարածված են գրունտային ջրեր, որոնք սնվում են Գետառո և Զրվեժ գետերից: Գրունտային ջրերը հայտնաբերվել են 7.0 և 8.5մ խորություններում: Ըստ լաբորատոր տվյալների՝ նշված խորությամբ ջրերը երկաթբետոնե կառույցների նկատմամբ համարվում են ոչ ագրեսիվ: Ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը կազմում է 36,0 ամիս՝ շինարարական աշխատանքների կատարման թույլատրման տրամադրման օրվանից: Տարածքում առկա են քանդման ենթակա՝ 331.7 քմ մակերեսով ինքնակամ կառուցված ցածրահարկ շինություններ, որի քանդման համար առկա է Երևանի քաղաքապետարանի կողմից տրված քանդման թույլտվություն:

Նախագծով ներկայացված համալիրը բաղկացած է երկու Ա և Բ շենքերից, որոնք ունեն բարդ հատակագծային լուծումներ: Շենքերից յուրաքանչյուրը բաղկացած է 2 ստորգետնյա և մի հատվածում 24, իսկ մյուս հատվածում 15 վերգետնյա հարկերից: 1-3-րդ, որոշ հատվածով 1-4րդ և 1-15-րդ հարկերում նախատեսվում են գրասենյակներ և կոմերցիոն տարածքներ: Շենքերի մի հատվածով 4-24-րդ հարկերում նախատեսվում են բնակարաններ: Ստորգետնյա հարկերում նախատեսվում են ավտոկայանատեղիներ, տեխնիկական և կոմերցիոն տարածքներ: Շենքերում նախատեսված են մի քանի մուտքեր՝ առանձին բնակելի, հասարակական և գրասենյակային տարածքների համար: Դեպի հարավ նայող բնակարաններից բացվում է գեղեցիկ տեսարան դեպի Արարատ լեռը, իսկ դեպի հյուսիս նայող բնակարաններից Անգլիական այգի և Փոքր Կենտրոն:

Ճակատները նախատեսվում է երեսպատել սև տուֆի, սպիտակ անմշակ տրավերտինի և բազալտի հղկած քարե սալերով: Տանիքը հարթ է, համատեղված ջրահեռացմամբ:

Կառույցի կոնստրուկտիվ սխեման նախատեսվում է կարկասային, ծածկը՝ մոնոլիտ ե./բ:

Շենքերի տանիքներում նախագծով նախատեսվում են ուղղաթիռի թռիչքի և վայրէջքի համար նախատեսված համապատասխան հարթակներ: ՀՀ օրենսդրության և նորմատիվ տեխնիկական փաստաթղթային պահանջներով համապատասխան թույլտվություններն ստանալուց հետո:

Հակահրդեհային օդամուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակակենտրոնական վահանակից: Ավտոկայանատեղերում նախատեսված է ներածման և արտածման մեխանիկական համակարգեր: Արտածման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգը առանձին է: Օդափոխությունը իրականացված է վնասակար գազարտանետումների նոսրացման և հեռացման համար:

կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը՝ 10933.3 քմ  
կառուցապատման մակերեսը՝ 3125 քմ – 28,6%;  
անջրանցիկ մակերեսը՝ 3404,3 քմ – 31,1 %;





կանաչապատման մակերեսը՝ 4404քմ – 40,28 %;

բնակարանների քանակը՝ 154 է, ավտոկայանատեղիներն՝ 380 :

Բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու են համաձայն տեխնիկական պայմանի միանալով՝ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ ցանցին, որի ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են մատակարար կազմակերպություն: Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Երևան քաղաքի ոռոգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն՝ տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի: Նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչների կիրառմամբ՝ ապահովելով աղմուկի ցածր մակարդակ:

Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ՝ քանդման և շինարարության փուլում,
- փոշու արտանետումներ՝ հիմքերի փորման ընթացքում,
- վառելիքի արտանետումներ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները՝ ջրցանի ծավալները հաշվարկվել են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավարարի միայն փոշենստեցման համար, անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն կուղղորդվեն պարզարան, որը նախատեսվում է շինարարական հրապարակին կից: Այն իրենից ներկայացնում է պլաստիկ 200 խմ ծավալով տարողություն: Պարզարանում տեղի է ունենալու մեխանիկական նստեցում, որից հետո պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:





Բնակելի համալիրն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով: Ավտոկայանատեղիները ևս ապահովված են հակահրդեհային համակարգերով, ծխահեռացման և հրդեհաշիջման համակարգերով: Շենքում նախատեսված են ներածման և ծխի արտածման համակարգեր: Նախատեսվում է բնակելի հարկերում և ավտոկայանատեղիներում տեղադրել կրակմարիչներ և ապահովվել էվակուացիոն ելքերով:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինարարական հրապարակը ամբողջ տարածքն է:

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ՝

- շինարարական նյութերի մնացորդներ՝ շինարարական աղբի տեսքով (ավազի, բետոնի, քարի և այլն), (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)

- կոշտ կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4)՝ կառուցապատման փուլում և շահագործման փուլում:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախառնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնալցման համար համապատասխան դասի բետոնը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով:

**Պարճառարանական մաս.** Հաշվետվության և նախագծի շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, նախատեսվել է գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսումը և դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումներ, դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմներ: Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝

- շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:
- օդային ավազանի՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում արտանետումների, գրունտի փորման աշխատանքների հետ,
- հողային, ջրային ռեսուրսների օգտագործման հետ,





- արտակարգ իրավիճակների առաջացման հետ,
- թափոնների առաջացման և կառավարման հետ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 4404մ<sup>2</sup> մակերեսով համապատասխան քաղաքապետարանի կողմից տրված կանաչապատման, արդիականացման և բարեկարգման նախագծի:

Տարածքում առկա են ծառեր և թփերի, որոնք նախագծի համաձայն ազդեցության չեն ենթարկվելու:

**Եզրափակիչ մաս.** Հանրային լուսմների ծանուցումն իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում: Հանրային լուսմների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, Երևանի քաղաքապետարանը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում, շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության համաձայն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կլինի թույլատրելի նորմայի սահմաններում, քանի որ շինարարական աշխատանքների ազդեցություններն իրենց բնույթով սահմանափակ են և կրում են ժամանակավոր բնույթ:

### **Պարտադիր կատարման ենթակա պահանջներ**

- Անհրաժեշտ է կատարել հողամասի գործառնական նշանակության փոփոխություն (բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերից բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի)՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգի:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

- «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները (կաթսայատուն, վերելակ և այլն) օրենքով սահմանված կարգով ներկայացնել





տեխնիկական անվտանգության փորձաքննության:

- Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով, շինարարության ընթացքում՝ ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:

- Նախագծով նախատեսված ուղղաթիռների շահագործումը բնակելի շենքերի տանիքներին ապահովել՝ ՀՀ օրենսդրության և նորմատիվ տեխնիկական փաստաթղթային պահանջների համապատասխան:

- Ուղղաթիռակայանների տեղակայումը ապահովել՝ ըստ ՍՆ 457-, ՀՀՇՆ IV-11.05.03, ՀՀՇՆ IV 11.05.03 շինարարական նորմերի պահանջների, բնակեցման տարածքից ու բնակչության զանգվածային հանգստի գոտիներից թռիչքների անվտանգությունն ու օդազնացության աղմուկի թույլատրելի մակարդակը ապահովող հեռավորության վրա, հաշվի առնելով բնակավայրերի՝ սանիտարական նորմերով սահմանված աղմուկի և էլեկտրամագնիսական ճառագայթման թույլատրելի մակարդակները:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի, Կենտրոն վարչական շրջան, Գ. Լուսավորչի փողոց 4 հողամաս հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագծին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան